Վերանայված և հաստատված է
«Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի 2014թ. հուլիսի 11-ի նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա.Սեդրակյան

ԿԱՐԳ

«ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ

(Բակալավրիատ)

Առկա ուսուցում

Ընդհանուր դրույթներ

Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար «Ուրարտու» համալսարանը, յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած, վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականները՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:

«Ուրարտու» համալսարանի ուսանողը փոխադրվում է հաջորդ կուրս՝ հետևյալ անհրաժեշտ պայմաններն ապահովելու դեպքում:

- Բուհի ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
- Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

Ըստ ուսման առաջադիմության, «Ուրարտու» համալսարանի բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները դասակարգվում են որպես՝

ա/ առաջադիմող ուսանողներ

բ/ փորձնական շրջանի կարգավիճակ ունեցող ուսանողներ

գ/ հեռացման ենթակա ուսանողներ:

Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

ա/ կիսամյակում ունի 30 կրեդիտ (10% թույլատրելի շեղումով),

բ/ հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,

գ/ ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի 45 նվազագույն չեմը:

դ/ Ուսումնական տարին առաջադիմությամբ ավարտած ուսանողը հրամանագրվում է հաջորդ կուրս:

Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը :

- Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
- Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանին:
- Ստուգարքային 4 և ավելի առարկաներից անցողիկ ռեյթինգային միավորներ չհավաքած ուսանողները հեռացվում են համալսարանից:
- Երեք պարտք ունեցող ուսանողները թույլատրվում են մասնակցելու քննաշրջանին, եթե քննաշրջանի առաջին շաբաթվա ընթացքում հանձնում են պարտքերից մեկը:
- Փորձաշրջանը հաջողությամբ ավարտած ուսանողը հրամանագրվում է հաջորդ կուրս:
- Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: